ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2022թ. սեպտեմբերի 9-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 9-րդ բ դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Նարինե Ոսկանյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրություն:
2. 2022-2023 ուստարում ուսումնական գործընթացը կազմակերպելու հարցի քննարկում:

1.Լսեցին.- Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրության հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Նարինե Ոսկանյանը՝ ներկայացնելով ծնողական խորհրդի ընտրության կարգը: Առաջարկվեց նոր ուսումնական տարվա համար ձևավորել 9-րդ բ դասարանի ծնողական խորհուրդ՝ նախագահ և չորս անդամ կազմով: Առաջարկվեց հինգ անդամների թեկնածություն:Նախագահի թեկնածու առաջադրվեց, որից հետո կատարվեց քվեարկություն, որի արդյունքում միաձայն նախագահ ընտրվեց Բաղդասարյան Թամարան:

Որոշեցին. - 9-րդ բ դասարանում ձևավորել ծնողական խորհուրդ հետևյալ կազմով.

1. Բաղդասարյան Թամարա /նախագահ/
2. Փանոսյան Անի /անդամ/
3.Աբելյան Լուսինե /անդամ/
4. Հովհաննիսյան Սուսաննա /անդամ/
5. Մկրտչյան Նունե /անդամ/

2.Լսեցին.- 2022-2023 ուստարում ուսումնական գործընթացը կազմակերպելու հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Նարինե Ոսկանյանը տեղեկացնելով, որ սահմանվում է հնգօրյա աշխատանքային ռեժիմ, դասերը սկսվում են 9:00-ին և ավարտվում են 15: 00- ին : Նա հրահանգեց, որպեսզի ծնողներն ուշադիր լինեն երեխաների ուսման հարցում, գրենական պիտույքների, համազգեստների և հաճախումների նկատմամբ: Ինչպես նաև նշեց,որ այս ուսումնական տարվա ավարտին աշակերտները պետք է հանձնեն ավարտական քննություններ, ուստի պետք է ավելի լուրջ մոտենալ ուսումնառությանը, որպեսզի կարողանան

հեշտությամբ հաղթահարել ավարտական քննությունները: Տեղեկացրեց նաև, որ 1-ին կիսամյակը բաղկացած է 15 շաբաթից:

Որոշեցին.- Առավել ուշադիր և հետևողական լինել երեխաների ուսման հարցում: Պահել ուսուցիչ-աշակերտ-ծնող կապը, անհրաժեշտության դեպքում մեծացնել երեխաների վերահսկողությունը, որպեսզի կարողանան առավել արդյունավետ կազմակերպել ուսումնական գործընթացը:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Բաղդասարյան Թամարա

Քարտուղար՝ Փանոսյան Անի